ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հայ-ամերիկյան հարաբերությունների ձևավորումը գաղտնազերծված փաստաթղթերում

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում ներկայացվում է ԱՄՆ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: Այդ համատեքստում փորձ է արվում վերլուծել ԱՄՆ քաղաքականությունը նաև Հարավային Կովկասի նկատմամբ հասկանալու համար, թե արդյո՞ք ԱՄՆ ակտիվ քաղաքականությունը կրել է երկկողմ, թ՞ե տարածաշրջանային բնույթ: Միևնույն ժամանակ, առանձին ուսումնասիրության առարկա է հանդիսանում ԱՄՆ կողմից Հայաստանի անկախության ճանաչման ժամանակահատվածը, ճանաչումից մինչ դիվանագիտական հարաբերությունների հաստատում, դիվանագիտական նոտաների փոխանակում և դեսպանությունների հիմնում: Այդ նպատակով իրականացվել են ուսումնասիրություններ ԱՄՆ պետքարտուղարության արխիվներում՝ մասնավորապես ուսումնասիրվել են գաղտնազերծված փաստաթղթեր, որի արդյունքում ի հայտ են եկել նոր մանրամասներ ԱՄՆ՝ Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականության և առաջնահերթությունների վերաբերյալ: Ելնելով այն հանգամանքից, որ այդ փաստաթղթերը լույս են սփռում մի շարք կարևոր գործընթացների վրա, հոդվածում փորձ է արվում հաշվի առնել նոր երևան եկած հանգամանքները և համադրել արդեն իսկ գոյություն ունեցող փաստերի հետ:

Բանալի բառեր
Հայ-ամերիկյան հարաբերություններ, դիվանագիտական հարաբերությունների հաստատում, անկախության ճանաչում, Հայաստան, ԱՄՆ:

Նախաբան

Մասնագիտական գրականության մեջ կա կարծիք, որ Արևմուտքն առանձնապես հետաքրքրված չէ Հարավային Կովկասով և Միջին Ասիայով, քանի որ այս տարածաշրջանները Ռուսաստանը

ավանդաբար համարել է իր ազդեցության գոտին:[1] Ավելին, կա կարծիք, որ բացառությամբ Բալթյան երկրների, նախկին ԽՍՀՄ պետություններին որպես ռուսական ազդեցության գոտի են համարել հենց Արևմուտքում:[2] Կա իհարկե նաև հակառակ պնդում, որ ԱՄՆ-ն հստակ հետաքրքրություններ ունի այս տարածաշրջանում, որոնք կենսական նշանակություն չունեն, չնայած չափազանց կարևոր են: Այդ պատճառով էլ, ԱՄՆ-ն փորձել է որոշակի ազդեցություն ձեռք բերել տարբեր հնարավորությունների դեպքում, օրինակ ԽՍՀՄ փլուզումից, սեպտեմբերի 11-ի իրադարձություններից կամ ռուս-վրացական հակամարտությունից հետո:[3]

Հայ-ամերիկյան հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են մասնագիտական գրականության մեջ և, միգուցե այդ պատճառով, կարծիք կա, որ այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ում պետական ռազմավարություն չկար Հարավային Կովկասի երկրների վերաբերյալ, ինչպես նաև պատմական փորձ չկար այս տարածաշրջանում ներգրավված լինելու տեսանկյունից՝ մինչև ԽՍՀՄ փլուզումը:[4] Իհարկե, ԱՄՆ-ն այդ տարածաշրջանում չէր կարող շահեր հետապնդել ԽՍՀՄ գոյության տարիներին, ինչպես նաև ԽՍՀՄ ձևավորումից առաջ, սակայն դա չի նշանակում, որ ԱՄՆ-ն՝ որպես գերտերություն, չէր ցանկանում որոշակի ազդեցություն կամ ներգրավվածություն ունենալ Հարավային Կովկասում: Ինչ վերաբերում է ռազմավարության բացակայությանն, ապա այդ պնդումը, ֆորմալ մոտեցման դեպքում, իհարկե, հիմնավոր է, սակայն միաժամանակ պետք է

[1] **Speck U.,** Europe must stand its ground against Russia, http://carnegieeurope.eu/2014/11/30/europe-must-stand-its-ground-against-russia/hvo4 Carnegie Europe November 2014 Issue.

[2] Նույն տեղում:

[3] **Rumer E., Sokolsy R., Stronsky P.,** US Policy Toward the South Caucasus: Take Three, Carnegie Endowment 12, 2017. https://carnegieendowment.org/2017/05/31/u.s.-policy-toward-south-caucasus-take-three-pub-70122 p. 15.

[4] **Gevorgyan N.**, Armenian-American relations in the context of the US foreign policy priorities in the South Caucasus region 1991-2001, Yerevan, 2012.

հաշվի առնել այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն սովորաբար առանձին հրապարակայնացված ռազմավարություն չի ունեցել Հարավային Կովկասի կամ նման այլ տարածաշրջանի նկատմամբ, բացառությամբ, օրինակ Աֆղանստանի, որի հետ կապված ռազմավարություն ընդունվեց միայն 2017 թվականին՝նախագահ Դոնալդ Թրամփի օրոք: Կա նաև կարծիք, որ ամերիկյան ստրատեգները Հարավային Կովկասին վերաբերում էին, որպես առավել լայն տարածաշրջանի բաղկացուցիչ մաս, ինչպիսին է Կասպիական ավազանը, Եվրասիական, Մեծ Մերձավորարևելյան տարածաշրջանները:[5] Սա իհարկե հիմնավոր մոտեցում է այն առումով, որ մասնավորապես 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներից հետո ամերիկյան արտաքին քաղաքականությունը զգալիորեն վերափոխվեց և անվտանգությունը դարձավ կարևորագույն առաջնահերթություն: Հենց այդ ժամանակ շրջանառության մեջ դրվեց ԱՄՆ պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդի ներկայացրած CAMCA Region (Central Asia, Mongolia, the Caucasus and Afganistan) եզրույթը: 2001թ. նոյեմբերին Ռամսֆելդը հենց այս ուղղությամբ այցեր ունեցավ՝ համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարի գործում ԱՄՆ-ի համար նոր դաշնակիցներ գտնելու նպատակով:[6] Միաժամանակ, Հարավային Կովկասում ամերիկյան հետաքրքրությունները ուսումնասիրելու ընթացքում կարելի է նկատել, որ Իրանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականությունը (ռազմավարություն եզրույթից խուսափելու դեպքում) ներառում էր նաև սերտ համագործակցություն Հարավային Կովկասի առանձին պետությունների հետ և այս պետությունները կարևոր նշանակություն կարող էին ունենալ Իրանի մեկուսացման դեպքում: Նույնը կարելի է ասել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության տարածման դեմ պայքարի մասին, որի ընթացքում Հարավային Կովկասի պետությունները, մասնավորապես՝ Վրաստանը, կարևոր նշանա-

[5] Նույն տեղում, էջ 36

[6] Rumsfeld begins diplomatic tour, November 2001, www.edition.cnn.com/2001/europe/11/01/rumsfeld/russia/index.html

կություն ունեին։ Տարածաշրջանում իր ռազմավարական դաշնակից Թուրքիայի ազդեցության տարածման տեսանկյունից ԱՄՆ-ի համար չափազանց կարևոր էր նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը և սահմանների բացումը, որովհետև միայն այդ դեպքում հայ-իրանական սահմանի փակումը ԱՄՆ-ի համար հնարավոր հեռանկար կարող էր դիտարկվել։ Ավելի ուշ Ադրբեջանը նույնպես կարևոր դերակատարություն ստանձնեց ԱՄՆ-ի համար՝ Աֆղանստանի ռազմավարության կիրառման տեսանկյունից։ Միաժամանակ, մասնագիտական գրականության մեջ հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածը մի շարք օբյեկտիվ պատճառներով մանրամասն չի ուսումնասիրվել, ինչի պատճառով հնարավոր չի եղել խոր և հիմնավոր վերլուծություն անել՝ պարզելու, թե որո՞նք էին ամերիկյան հետաքրքրությունները Հայաստանում և տարածաշրջանում, ինչ քաղաքական գիծ էր ԱՄՆ-ն որդեգրել՝ որպես Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների առաջնահերթություն։ Այդ պատճառների մեջ ծանրակշիռ տեղ ունի այն հանգամանքը, որ հարաբերությունների զարգացման տեսակետից կարևոր նշանակություն ունեցող դրանց հաստատման առաջին տարիներին Պետքարտու-ղարության, Սպիտակ Տան, Պենտագոնի, ԿՀԳ և այլ պետական մարմինների գործունեությանը վերաբերող փաստաթղթերը գաղտնազերծվել են միայն 2016-2018թթ.։ Այդ փաստաթղթերի վերլուծությունը լույս է սփռում ամերիկյան արտաքին քաղաքականության սկզբունքների, մոտեցումների և առաջնահերթությունների վրա՝ զգալի ճշգրտումներ մտցնելով տեղի ունեցած գործընթացների վերաբերյալ ձևավորված գնահատականներում։ Հոդվածում փորձ է արվում գաղտնազերծումից հետո ի հայտ եկած փաստերի հիման վրա վերականգնել հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը հաջորդած մի քանի տարիներին տեղի ունեցած գործընթացների ամբողջական պատկերը և գնահատել արդյունքները։ Դա առավել ևս կարևոր է, քանի որ կարծիքների

վերոհիշյալ բախումն առկա է մինչ օրս՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված նոր անկախ պետությունների հետ ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից գրեթե երկու տասնամյակ անց: Ընդ որում, նպատակահարմար է այդ երկրների դեպքերն ուսումնասիրել առանձին-առանձին՝ տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Այս հոդվածում կդիտարկվի Հայաստանի դեպքը:

Մեկնարկը

1991 թվականի դեկտեմբերի 25-ի երեկոյան, երբ ամերիկացիները նշում էին Սուրբ Ծննդյան տոնը, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն իր Ամանորյա ուղերձում հայտարարեց. «ԱՄՆ-ն ճանաչում է Ուկրաինայի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի անկախությունը: Բոլոր այս պետությունները հստակ հանձնառություններ են ստանձնել: Մենք շատ արագ դիվանագիտական հարաբերությունները կհաստատենք այս երկրների հետ, նոր կապեր կստեղծենք: Մենք կաջակցենք անդամակցելու Միավորված Ազգերի Կազմակերպությանը այն պետություններին, որոնք դեռ անդամ չեն:»[7] Այս նախադասությամբ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը հայտարարեց, ի թիվս այլ պետությունների, նաև Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման որոշման մասին:

ԽՍՀՄ փլուզումը դանդաղ գործընթաց չէր, սակայն ԱՄՆ-ում պատկերացում կար, որ պետությունը կգնա բարեփոխումների, այլ ոչ թե փլուզման ճանապարհով: Ռիչարդ Կաուզլարիչը, ով 1991-1993 թվականներին պետքարտուղարի օգնականի տեղակալն էր՝ Եվրոպական հարցերով Բյուրոյում, և համակարգում էր ԱՄՆ

[7] END OF THE SOVIET UNION; Text of Bush's Address to Nation on Gorbachev's Resignation, www.nytimes.com/1991/12/26/world/end-soviet-union-text-bush-s-address-nation-gorbachev-s-resignation.html

հարաբերությունները նախկին ԽՍՀՄ պետությունների հետ, հիշում է.

«Մենք իհարկե չէինք սպասում, որ ԽՍՀՄ-ը կփլուզվի։ Ես Պետդեպի քաղաքականության պլանավորման վարչությունում էի աշխատում։ Ջորջ Շուլցը պետքարտուղարն էր 1982-1989թթ.։ Մեծ հույս կար, որ այնպիսի գործիչների հետ ինչպիսիք են Գորբաչովն ու Շևարնաձեն, ովքեր անցյալից կտրվելու ցանկություն ունեին, հնարավոր կլիներ ԱՄՆ-ի օգնությամբ ԽՍՀՄ տնտեսության մեջ բարեփոխումներ իրականացնել և փոփոխել տնտեսական համակարգը։ Շուլցը, լինելով բավական արդյունավետ պետքարտուղար, հոգով տնտեսագետ էր։ Սիրում էր խոսել այն մասին, որ ԽՍՀՄ ում իրականացվող տնտեսական բարեփոխումների շնորհիվ այդ պետությունը կարող է առաջ շարժվել։ Մենք առանձնապես լավ չէինք պատկերացնում, թե ինչ պետք է տեղի ունենար նույնիսկ այն ժամանակ, երբ պետքարտուղար նշանակվեց Բեյքերը և ԽՍՀՄ-ն սկսեց փլուզվել։ Հույս կար, իհարկե, որ այդ պետությունը չէր մահանա, սակայն երբ դա տեղի ունեցավ մենք մտածում էինք, թե ի՞նչ պետք է անենք այդ նոր 15 պետությունների հետ։ Դա ինչ որ բացառիկ երևույթ էր մեզ համար և մենք չգիտեինք ինչպես ճանաչել նրանց ինքնիշխանությունն ու անկախությունը, ինչպես դեսպանություններ բացենք, ինչպես գտնենք այդ դեսպանություններում աշխատակիցներ, այսինքն այնպես չէր, որ մենք կանխատեսել էինք և նստած սպասում էինք, որ դա տեղի է ունենալու։ Այդուհանդերձ մենք առաջին հերթին մտածում էինք, թե ինչպես աջակցենք այդ պետություններին, քան այն մասին թե ինչպես դեսպանություններում աշխատակիցներ գտնենք։»[8]

[8] Հեղինակի հարցազրույցը դեսպան Կաուզլարիչի հետ, Վաշինգտոն, 2017թ.:

Նախագահ Բուշի վարչակազմի 1991 թվականի ազգային անվտանգության ռազմավարությունը չհրապարակվեց մինչ օգոստոս, սակայն դրա հիմնական մասն արդեն իսկ պատրաստ էր դեռևս փետրվարին: Դա մի քանի պատճառ ուներ: Նախ այն, որ ԽՍՀՄ-ում իրադարձությունները չափազանց արագ էին զարգանում, իսկ ազգային անվտանգության ռազմավարության համար այդ գործընթացն ուներ առանցքային նշանակություն: Բացի այդ, իրավիճակը շատ արագ էր փոխվում ոչ միայն ԽՍՀՄ տարածքում, Վարշավյան համաձայնագրի անդամ երկրներում, այլև Մերձավոր Արևելքում և Պարսից ծոցում:[9] Ռազմավարության առաջին իսկ մասի առաջին նախադասությունը ունի հետևյալ ձևակերպումը. «Նոր դարաշրջանը. Ծանր պայքարը, որն աշխարհը երկու մասի բաժանեց երկու սերունդների կյանքի ընթացքում, վերջացել է: ԽՍՀՄ փլուզումը Արևելյան Եվրոպայի համար նշանակում է, որ սառը պատերազմն ավարտվեց և հիմնական խնդիրը լուծվեց: Մենք մուտք ենք գործում մի դարաշրջան, որի ուրվագիծը աներևակայելի կլիներ ընդամենը երեք տարի առաջ:»[10] Ռազմավարության մեջ միաժամանակ հռչակվում է, որ «Ավելի քան 40 տարի ամերիկյան ռազմավարությունը նպատակ է հետապնդել պայքարելու խորհրդային իշխանության ընդլայնման, խորհրդային ագրեսիայի և կոմունիզմի դեմ: Մենք, սակայն այժմ հակված ենք կարծելու, որ Խորհրդային Միությունն առավելապես ներգրավված է ներքին ճգնաժամը հաղթահարելու գործում: Մենք չգիտենք, թե ինչ ճանապարհով կգնա Խորհրդային Միությունը, բայց վերադարձը նույն հակառակորդ գերտերության կարգավիճակին, որի հետ վերջին 40 տարիների ընթացքում բախվել ենք, քիչ հավանական է:»[11] «Ռազմավարական տեսլական» գրքում Զբիգնև

---

[9] **Snider D.,** The National Security Strategy: Document Strategic Vision, Second Edition, March 15, 1995 issue: U.S. ARMY WAR COLLEGE, STRATEGIC STUDIES INSTITUTE http://nssarchive.us/wp-content/uploads/2012/05/Snider.pdf

[10] National Security Strategy of the United States 1991, http://nssarchive.us/NSSR/1991.pdf , preamble.

[11] National Security Strategy of the United States 1991, http://nssarchive.us/NSSR/1991.pdf , p.1.

Բժեզինսկին գրում է. «Սառը պատերազմի խաղաղ ավարտը, որը նշանավորվեց ԽՍՀՄ փլուզմամբ, դարձավ ԱՄՆ-ի՝ միակ համաշխարհային գերտերություն դառնալու ճանապարհի վերջին քայլը։»[12] Ստեփեն Քննոթը նշում է. «ԱՄՆ-ում կար կարծիք, որ քանի որ «Սառը պատերազմն» ավարտվել է, ԱՄՆ-ն պետք է առավել ակտիվ դերակատարություն ստանձնի, որպես համաշխարհային առաջնորդ, պաշտպանի ժողովրդավարական կառավարությունները, մարդու իրավունքներն ու մարդասիրական առաքելություններ իրականացնի»։[13] Սակայն ամերիկյան մասնա-գիտական շրջանակներում կար նաև հակառակ պնդումը, որ միաբևեռ աշխարհակարգի ձևավորումը վտանգավոր է ինչպես Միացյալ Նահանգների, այնպես էլ ընդհանրապես միջազգային հարաբերությունների համար։[14] Սակայն, ամենայն հավանա-կանությամբ, երկու հանգամանքներ ԱՄՆ վարչակազմի համար վճռորոշ եղան առաջին տարբերակն ընտրելու համար։ Նախ, թվում էր, որ այն իրագործելու համար լուրջ խոչընդոտներ չեն լինի, քանի որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում լուրջ խնդիրների հետ բախված Ռուսաստանը ստիպված էր կենտրոնանալ ներքաղաքական կյանքի, այլ ոչ թէ միջազգային հարաբերությունների վրա՝ անգամ նախկինում ԽՍՀՄ կազմում կամ ազդեցության ներքո գտնված հարևան տարածաշրջանների հետ կապված։[15] Միաժամանակ, որոշ հեղինակավոր մասնագետներ պնդում էին, որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված պետություններն անխուսափելիորեն գնալու են ժողովրդավարական վարչակարգերի հաստատման ճանապարհով։[16]

---

[12] **Bzhezinsky Z.,** Strategic Vision, 2013, New York, p. 7.

[13] **Knott S.,** The Foreign Policy of George Bush, https://millercenter.org/president/bush/foreign-affairs Miller Center of Public Affairs, University of Virginia. “George H. W. Bush.” December 20, 2018. https://millercenter.org/president/bush.

[14] **Torosyan T. and Vardanyan A.,**, The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics,* 2015, **20,** 3, 559-582.

[15] Նույն տեղում։

[16] **Huntington S.,**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century (Norman: University of Oklahoma Press 1991)

Ջորջ Բուշը ԱՄՆ պատմության վերջին նախագահն էր, որ ընտրվելուց առաջ արտաքին քաղաքականության մեջ փորձառություն ուներ: Նա հասցրել էր զբաղեցներ ԱՄՆ փոխնախագահի պաշտոնը 8 տարի, մինչ այդ ղեկավարել էր Կենտրոնական հետախուզական գործակալությունը, եղել էր ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ:[17] Հենց այս փորձառությունն էր Բուշին հուշում, որ, պետք է, օրինակ, համբերատար լինել և սպասել թե ի՞նչ ավարտ կունենա Մ. Գորբաչովի դեմ իրականացված հեղաշրջման փորձը, հետո նոր հանդես գալ համապատասխան հայտարարություններով:[18] Դեռևս ԱՄՆ-ԽՍՀՄ՝ Մալթայում տեղի ունեցած առաջին գագաթնաժողովի ժամանակ Բուշը հարցնում է Գորբաչովին, թե ի՞նչ տեսք կունենա ԽՍՀՄ-ն մի քանի տարի անց, ինչին Գորբաչովը պատասխանում է, որ նույնիսկ Հիսուս Քրիստոսին դա հայտնի չէ: Ըստ պետական դեպարտամենտի վերլուծական զեկույցի, «Պետական դեպարտամենտը չէր կարողանում՝ ոչ երկխոսության, ոչ ներքին խորհրդային մոնիտորինգի համակարգը վերլուծելով, հետևել խորհրդային կայսրությունում արագ տեղի ունեցող փոփոխություններին: Պետդեպը, ըստ էության, դուրս մնաց ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության խորհրդի հետ մղվող «մրցապայքարից», որը նախագահին արդեն իսկ խորհուրդներ էր տալիս ԱՄՆ-ԽՍՀՄ փոխհարաբերությունների վերաբերյալ: Պետքարտուղար Բեյկերը պնդում էր, որ մինչ Եվրոպայի վերջնական բաժանումը Պետդեպը պետք է արդեն իսկ հայտարարեր Սառը պատերազմի ավարտի մասին:[19] ԽՍՀՄ փլուզումը նշանակում էր, որ ԱՄՆ-ին ոչինչ չէր խանգարում ուղիղ հարաբերություններ հաստատել Միության նախկին պետությունների հետ: Ակնհայտ էր, որ Ռուսաստանը, որը ԽՍՀՄ իրավահաջորդն էր, տնտեսապես, քաղաքականապես,

---

[17] **Goldgeier J.,** George H.W. Bush: America's last foreign policy president, http://theconversation.com/george-h-w-bush-americas-last-foreign-policy-president-77513, The conversation journal, June 12, 2017.

[18] **Knott S.,** նույն տեղում:

[19] Short historical review and report of the US State Department, https://history.state.gov/departmenthistory/short-history/bushi

սիցիալապես քայքայված էր ու չափազանց սահմանափակ հնարավորություն ուներ հետապնդելու իր ազգային շահերը, ինչպես նաև տարածաշրջանային հետաքրքրությունները, նույնիսկ այն երկրներում, որոնք համարվել են Ռուսաստանի ազդեցության գոտիները սկսած ռուսական կայսրության ժամանակահատվածից։ Եթե ռուսական կայսրությունը 1905 թվականին կազմում էր 23մլն քկմ, ԽՍՀՄ-ը՝ 22,4մլն քկմ, ապա Ռուսաստանի Դաշնությունը՝ 17մլն քկմ։ Մինչխորհրդային և խորհրդային տարածքները (պետությունները) ցանկացած այլ երկրի համար անհասանելի էին եղել համագործակցելու և հարաբերություններ հաստատելու տեսանկյունից։ Իսկ ԽՍՀՄ փլուզումը նոր հնարավորություն էր թե՛ ռազմավարական, թե՛ տնտեսական, և թե՛ շուկայական հարաբերությունների հաստատման և առևտրի զարգացման տեսանկյունից։ Բնական էր, որ այդ հնարավորություններից ցանկանում էին օգտագործել շատերը, այդ թվում՝ ԱՄՆ-ն, որպես գերտերություն, ինչպես նաև նոր շուկաներ մշտապես փնտրող ամերիկյան բիզնեսը՝ որպես տնտեսության զարգացման լոկոմոտիվ։ Նորանկախ 15 պետությունները ոչ միայն նոր աշխարհակարգի ձևավորման հնարավորություն էին, այլ նաև հսկայական շուկաներ, հարուստ բնական պաշարներ, որոնց կարելի էր հասնել առանց Մոսկվայի հետ պայմանավորվելու։ Հետայսու թուրքմենական գազ, ադրբեջանական նավթ, կամ ղազախական օգտակար հանածոներ ձեռք բերելու համար պետք չէր Մոսկվայի համաձայնությունը, իսկ նորանկախ պետություն-ները առավել շահագրգռված էին իրենց էներգետիկ ռեսուրսներն ու բնական պաշարները ամերիկյան կամ եվրոպական ընկերու-թյուններին վաճառելու գործում։ Միաժամանակ, ԱՄՆ-ն Իրանի, Աֆղանստանի, կամ Իրաքի ուղղությամբ իր ռազմավարական շահերը հետապնդելու համար պարտավոր չէր համաձայնություն ձեռք բերել Մոսկվայի հետ։ Նախկին ԽՍՀՄ պետություններում ռազմաբազաներ կամ այլ ենթակառուցվածքներ ստեղծելու համար Վաշինգտոնը կարող էր ուղղակի խոսել Երևանի, Բիշկեկի, Բաքվի, Դուշանբեի և այլ ինքնիշխան պետությունների մայրաքաղաքների

հետ: Այս բոլոր իրողությունները հաշվի առնելով, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզման վերաբերյալ Գորբաչովի ելույթից անմիջապես հետո ԱՄՆ նախագահ Բուշը ճանաչեց ԽՍՀՄ մի շարք պետությունների, այդ թվում և Հայաստանի անկախությունը:

Ադրբեջանում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Կաուզլարիչը «Փոփոխությունների Ժամանակը. ԱՄՆ քաղաքականությունը Անդրկովկասում» աշխատության մեջ նշում է.

> «Այս ժամանակաշրջանում ԱՄՆ-ն խորապես ներգրավվեց այս տարածաշրջանում առաջին անգամ և օգնեց, որպեսզի այս պետությունները չխորտակվեն և պահպանեն իրենց անկախությունը Մոսկվայից, որովհետև մենք ռազմավարական նշանակություն էինք տալիս այդ տարածաշրջանին: Մեր հետաքրքրությունն էր նաև ազդեցություն ունենալ տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների վրա և ձգտել դրանք հեռու պահել Ռուսաստանի և Իրանի ձեռքերից ու հավասարապես այդ ռեսուրսները շուկա դուրս բերել այնպես, որ դրանք կախվածություն չունենան Ռուսաստանից կամ Իրանից:»[20]

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը

ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի անկախության ճանաչման հետևանքով անհրաժեշտ էր, որ Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի միջև կնքվեին և փոխանակվեին դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ պաշտոնական նոտաներ: 1992-ի հունվարի 7-ին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի և ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հանդիպումը, որի ժամանակ երկու երկրների միջև նոտաներ փոխանակվեցին դիվանագիտական

[20] **Kauzlarich R.,** Time for Change? U.S. Policy in the Transcaucasus, https://tcf.org/assets/downloads/tcf-Kauzlarich.pdf, The Century Foundation, NY, 2001.

հարաբերություններ հաստատելու վերաբերյալ:[21] Հարավային Կովկասի պետություններից առաջինը Հայաստանն էր, որ ֆորմալ առումով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ նոտաներ փոխանակեց ԱՄՆ-ի հետ, անկախության ճանաչումից երկու շաբաթ անց՝ հունվարի 7-ին: Վրաստանի հետ հարաբերությունները հաստատվեցին 1992թ. մարտի 24-ին,[22] իսկ Ադրբեջանի հետ 1992թ. փետրվարի 19-ին:[23]

Պետքարտուղարության գաղտնազերծած արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ամանորյա արձակուրդի ժամանակ ԱՄՆ-ում գտնվող Հայաստանի արտաքին գործերի առաջին նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը հանդիպում է խնդրել պետքարտուղար Ջեյմս Բեյքերից: Ըստ համապատասխան զեկուցագրի,[24] Հովհաննիսյանը ցանկացել է դիվանագիտական հարաբերությունների հաստատման հաջորդ քայլն անել՝ ֆորմալ առումով փոխանակել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ նոտաները և քննարկել երկկողմ տնտեսական հարաբերությունները: Ռ. Հովհաննիսյանը նաև ցանկանում էր, որ ԱՄՆ-ն Հայաստանին տրամադրի «Առավել բարենպաստ պետություն» կարգավիճակ, ինչը մեկ պետության կողմից մյուս պետությանը առևտրային առավել շահեկան պայմաններ է շնորհում: Հանդիպման համար Հովհաննիսյանը խնդրել էր 20 րոպե ժամանակ: Ամերիկյան կողմը համաձայնություն է տալիս հանդիպմանը և հունվարի 7-ին ժամը 2-ին Հայաստանի և ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներն առաջին անգամ հանդիպում են Պետդեպարտամենտում, իսկ հանդիպումը տևում է 35 րոպե:

---

[21] «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 17 հունվարի, 1992թ., թիվ 10 (355)

[22] Official Website of the State Department, US-Georgia relations history; https://history.state.gov/countries/georgia

[23] Official Website of the State Department, US-Azerbaijan relations, history; https://history.state.gov/countries/azerbaijan

[24] The talking points at the State Department declasified cable- *U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604215*

Հայկական կողմից հանդիպմանը մասնակցում էր նաև Գերագույն խորհրդի և նախարարների խորհրդի համատեղ որոշմամբ Հյուսիսային Ամերիկայում Հայաստանի ներկայացուցիչ նշանակ-ված Ալեքսանդր Արզումանյանը և Վան Գրիգորյանը, ով ներկայացնում էր Ամերիկայի Հայկական Համագումարը: Ի պատասխան Ջորջ Բուշի նամակին, Հովհաննիսյանը նախագահ Տեր-Պետրոսյանի նամակն է փոխանցում, որով Հայաստանը համաձայնում է դիվանագիտական հարաբերություններ հաստա-տել ԱՄՆ-ի հետ:[25] Բացի դիվանագիտական հարաբերությունների հաստատումից, հանդիպման ընթացքում ամերիկյան կողմը մի շարք հարցեր է առաջ քաշում: Նախ Ջեյմս Բեյքերը խնդրում է, որ Հայաստանը աջակցություն ցուցաբերի ԱՄՆ-ին՝ Հայաստանում դեսպանություն բացելու հարցում: Այնուհետև, Լեռնային Ղարաբաղի հարցում ամերիկյան կողմը կոչ է անում Հայաստանին ուղիղ բանակցությունների միջոցով լրացուցիչ ջանքեր գործադրել խաղաղության հաստատման համար: Բեյքերը հայտնում է նաև, որ մի քանի օրից Հայաստան է ուղարկվելու մարդասիրական օգնություն՝ պարենի տեսքով, ամերիկյան C-5 կարգո ինքնաթիռներով: Միաժամանակ ամերիկյան կողմը հայտնում է, որ տեղյակ է, որ նախօրեին Վրաստանի Նախագահ Զվիադ Գամսախուրդիան ապաստանել է Հայաստանում և խնդրում է, որպեսզի այդ հարցում Հայաստանն իր հետագա անելիքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրի Վաշինգտոնին: Հանդիպման ժամանակ Ջեյմս Բեյքերն առաջարկում է կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները, տեղեկացնելով, որ Անկարայի նկատմամբ տարածքային պահանջներ չունենալը և սահմանների ճանաչման վերաբերյալ համապատասխան հայտարարություն անելը լուրջ քայլ կլինի Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու տեսանկյունից: Ի դեպ պետքարտուղարի զրույցի կետերում նշվում է, որ եթե Հայկական կողմը հարց բարձրացնի Արցախում խաղաղապահներ տեղակա-

[25] Նույն տեղում:

յելու վերաբերյալ, ապա ԱՄՆ դիրքորոշումն այն է, որ դա ժամանակավրեպ է և ոչ արդյունավետ։[26]

Այսպիսով, հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին իսկ պաշտոնական հանդիպման ժամանակ ամերիկյան կողմը միանգամից առաջ է քաշում հայ-թուրքական հարաբերություններ կարգավորման հարցը, ինչը շարունակում է մնալ ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության օրակարգում՝ բոլոր գալիք վարչակազմերի օրոք, հաջորդող տարիների ընթացքում։ Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը նշանակում էր սահմանների բացում, ինչը, ենթադրվում էր, թույլ կտար Հայաստանին ավելի քիչ կախվածություն ունենա Ռուսաստանից և Իրանից, կդյուրացներ Հայաստանի արտաքին հաղորդակցությունը, մասնավորապես, Եվրոպական Միության երկրների հետ և անարգել ելք կտար դեպի ծով։ Փաստացի ԱՄՆ-ում կար այն ընկալումը, որ Ռուսաստանը վաղ թե ուշ վերադառնալու է տարածաշրջանային գերտերության կարգավիճակին։ Դա, իհարկե, ժամանակի հարց էր և այդ ժամանակը անհրաժեշտ էր արդյունավետ օգտագործել։

Արդեն հունվարի 9-ին ԱՄՆ Պետդեպարտամենտը առավել մանրամասն հաղորդագրություն[27] է ուղարկում Երևանում, Անկարայում և Մոսկվայում ԱՄՆ դեսպանություններ՝ ներկայացնելով հանդիպման արդյունքները։ Գաղտնազերծված փաստաթղթից պարզ է դառնում, որ պետքարտուղարը հայտարարում է, որ Հայաստանը պետք է հստակեցնի իր դիրքորոշումը հայ թուրքական սահմանի վերաբերյալ։ Հովհաննիսյանը պետքարտուղարին տեղեկացրել է, որ առաջիկայում պատրաստվում է այցելել Անկարա (Պետդեպարտամենտն իր դեսպանություններին տեղակացնում է, որ Հովհաննիսյանը իրականում Ստամբուլ է մեկնում, ոչ թե՝ Անկարա), որտեղ էլ կհստակեցնի Հայաստանի դիրքորոշումը սահմանի վերաբերյալ։ Ըստ փաստաթղթի, Բեյքերը նաև պատրաստա-

[26] Նույն տեղում։
[27] U.S. Department of State, Case No. F-2009-03553 Doc No. C17604531

կամություն է հայտնում աջակցել հայ-թուրքական բանակցություններին: Դրան ի պատասխան՝ Հովհաննիսյանն ասում է, որ Հայաստանի ղեկավարությունը երբևէ տարածքային պահանջ չի ներկայացրել Թուրքիային: Ռաֆֆի Հովհաննիսյանը նաև տեղեկացնում է Բեյքերին, որ եթե Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ Ադրբեջանը չգնա բանակցությունների, ապա Հայաստանը կխնդրի ԱՄՆ-ին՝ օժանդակելու Լեռնային Ղարաբաղում միջազգային խաղաղապահ զորքեր տեղակայելու հարցում: Հովհաննիսյանը նաև դժգոհություն է հայտնում «Ազատության» ռադիոկայանի հայկական ծառայության աշխատանքից՝ տեղեկացնելով պետքարտուղարին, որ ռադիոկայանի գործունեությունը չի արտացոլում ԱՄՆ կառավարության դիրքորոշումը Հայաստանի կառավարության նկատմամբ: Պետքարտուղար Բեյքերը պատասխանում է, որ «Ազատություն» ռադիոկայանը անկախ է, սակայն դա չի նշանակում որ նրա գործունեությունը պետք է հակասի ԱՄՆ քաղաքականությանը Հայաստանի կառավարության նկատմամբ և հայկական կողմի հարցադրումը անպայման կքննարկվի (ի դեպ, պետքարտուղարությունը դեսպանություններին տեղեկացնում է, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարի մտահոգությունը փոխանցվել է «Ազատություն» ռադիոկայանին): Հայաստանն այն պետություններից էր, որտեղ «Ազատություն» ռադիոկայանն ուներ մեծ թվով ունկնդիրներ, հիմնականում տեղեկատվության անհասանելիության ու լրատվական հոսքերի այլընտրանքի բացակայության պատճառով: Ինչ վերաբերում է Բեյքերի բարձրացրած՝ Զվիադ Գամսախուրդիայի վերաբերյալ հարցին, ապա ապրիլի 12-ին ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության զեկուցագրի համաձայն, Գամսախուրդիան Հայաստանում որոշ ժամանակ մնալուց հետո փորձել է համակիրներ հավաքել և հունվարի վերջին վերադառնալ Վրաստան, սակայն չի կարողացել և տեղափոխվել է

Չեչենո-Ինգուշական Հանրապետություն, որտեղ մնացել էլ մինչև 1992թ. ապրիլի 12-ը:[28]

Ռաֆֆի Հովհաննիսյանը հիշում է.

«Երբ ես նշանակվեցի նախարար, չկար այնպիսի մեխանիզմ, որով ինձ պետք է հուշագրի օրինակ ներկայացնեին, ես էլ, օրինակ, խորհրդակցություն հրավիրեի, ասեի՝ այսպես կամ այնպես անենք: Ես բերեցի հուշագրերի, դիվանագիտական նոտաների ձևանմուշ-ները: Սակայն, ես էլ էի կիրառական դիվանագիտության մեջ սկսնակ, դա իմ դիվանագիտական առաջին փորձն էր՝ Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցից հետո: Եվ, աստիճանաբար կառուցելով արտգործնա-խարարությունն՝ իր փոխնախարարներով, վարչություն-ներով, բաժնի պետերով և այլն, նաև, առաջին հերթին, փորձեցինք դիվանագիտական հարաբերությունների հարցը լուծել: Նոյեմբերի վերջին առաջինը մեզ ճանաչեց Լիտվան, հետո՝ Ռումինիան, իսկ Խորհրդային Միության պաշտոնական փլուզումից հետո, Սուրբ Ծննդյան օրը՝ 1991 թվականի դեկտեմբերի 25-ին, Ջ. Բուշի ամանորյա ուղերձն էր, որն ամբողջ գերդաստանով դիտեցինք: Իրարանցում էր, որովհետև Ամերիկայի, այսինքն՝ ազատ աշխարհի դեկավարը՝ նախագահը, ճանաչում է երկրներ, որոնց մեջ Հայաստանն էր, բայց Ադրբեջանը չկար: Դա, իհարկե, բացեց դռներն Արևմտյան աշխարհի համար: Հայաստանը նոր էր անկախացել, Արցախը՝ նույնպես, մարդկային մեծ կորուստներից հետո անկախությունը նոր էր հռչակել: Եվ մենք խնդիր ունեինք այդ նորաստեղծ վիճակում հասնել Հայաստանի Հանրապետության ճանաչմանը միջազգային հանրության կողմից, և դրա միջոցով ու դրա օգտագործմամբ, նաև հետապնդել Արցախի շահը: Մարտի 2-ին էլ բարձրացրեցինք մեր

[28] DI IM-Post-Gamsakhurdia Georgia: The Crisis of Legitimacy, https://www.cia.gov/library/readingroom/docs/DOC_0005403091.pdf

պետական դրոշը ՄԱԿ-ում, Հայաստանն անդամակցեց այդ կազմակերպությանը, բայց Արցախի հարցը մնաց բաց: Որ մենք, հիմնականում, ենթարկվել ենք ջարդերի, հարձակումների, ինքնապաշտպանվել ենք, մեկ-մեկ մենք էլ անցել ենք հարձակման՝ դա էլ է փաստ, բայց, հիմնականում, մենք եղել ենք ինքնապաշտպանական դիրքերում, և եղել են պահեր, երբ Արցախի գոյությունը վտանգի տակ է եղել: Եվ, ուրեմն, իշխանությունը որդեգրել էր այն մոտեցումը, որ այդ հարցը տվյալ շրջանում, հարմար պայմաններում, եթե համապատասխանեն մեր շահերը, պետք է գնա միջազգայնացման, եթե պետք լինի՝ «Միջազգային Կոնֆերանս»-ի: Այդ պահին գնացինք այդ ճանապարհով և սկսեցինք մտածել այն ֆորումի մասին, որտեղ Հայաստանը գոնե կունենար վետոյի իրավունք: Այդ ֆորումը դարձավ ԵԱՀԿ-ն, և ոչ ՄԱԿ-ը: Այնպես որ, խաղաղապահների պահը կար այն ժամանակ, հետո արդեն զարգացավ այն գիտակցությունը, որ զինադադարից հետո հայաստանյան կողմը և Արցախը կարող են պաշտպանել սահմանները՝ առանց խաղաղապահների, ինչը նախընտրելի է: Որովհետև ով էլ մտներ՝ որպես խաղաղապահ, Ռուսաստանը, թե մեկ ուրիշ պետություն, կօգտագործեր այդ ներկայությունն իր շահերի համար: Դրա փորձն ունեինք՝ «Կոլցո» գործողություն և այլն: Եվ, ուրեմն, խաղաղապահների հարցի արծարծումը այն պատճառով էր, որ թե՛ Հայաստանի սահմանային շրջանները՝ գյուղերը և քաղաքները, թե՛ Արցախը, կորուստներ ունեցել էին, և նախնական քայլերն էին արվում՝ շոշափելու միջազգային հանրության մոտեցումը Արցախի հարցում, և, նաև, ԼՂ հարցի միջազգայնացման առումով:»[29]

[29] Հեղինակի հարցազրույցը ՀՀ նախկին ԱԳ նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ, Երևան, 2017թ.

Ճանաչումից շուրջ մեկ ամիս անց՝ փետրվարի 3-ին, ԱՄՆ-ն Երևանում բացեց իր դեսպանությունը և Ստիվեն Մանը նշանակվեց գործերի ժամանակավոր հավատարմատար: Նա շուրջ մեկ ամիս պաշտոնավարեց, մինչ նոր գործերի ժամանակավոր հավատարմատարը՝ Թոմաս Փրայսը, փոխարինեց նրան: Իսկ մինչ ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Ստիվեն Մաննի ժամանումը Հայաստան, ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակվեց և երկու շաբաթ այդ պաշտոնում աշխատեց ԽՍՀՄ-ում ԱՄՆ դեպանության նախկին աշխատակից Ռիչարդ Նորլանդը:[30] Սա նրա առաջին այցն էր Հայաստան և նա ընդամենը մի քանի օր աշխատեց Հայաստանում: «Ես Հայաստանի մասին հիշում եմ դեռևս երկրաժաշարժի օրերից, երբ Մոսկվայում մեր դեսպանության մի մասը մեկնել էր Հայաստան՝ մասնակցելու փրկարարական աշխատանքներին: Եվ նրանք ահավոր պատմություններ էին պատմում այդ ժամանակվա վերաբերյալ: Հիշում եմ նաև Սումգայիթի իրադարձությունները 1988 թվականին: Շատ բարդ ժամանակներ էին: Հիշում եմ նաև, երբ Երևանում էինք և պատերազմական գործողություններ էին ընթանում, Ժիրայր Լիպարիտյանը զանգում և ասում էր, որ չի բացառվում, որ կարող է այնպես պատահել, որ ստիպված լինենք էվակուցանել դեսպանությունը: Իսկ ամբողջ դեսպանությունը տեղակայված էր հյուրանոցի մեկ հարկում:»[31]

Խորհրդային Միությունն այլևս դե յուրե և դե ֆակտո գոյություն չուներ: Այս իրողությունն իր հետ բերում էր քաղաքական, տնտեսական, ռազմաքաղաքական նոր մարտահրավերներ և անվտանգության ոլորտում նոր մոտեցումների անհրաժեշտություն: ԱՄՆ-ն և Եվրոպական պետությունները ցանկանում էին, որպեսզի ԽՍՀՄ փլուզման ընթացքում անկանխատեսելի վայրիվերումներ չլինեին և իրադրությունը դուրս

[30] Official resume of the Ambassador Norland, http://www.jcs.mil/Leadership/Article-View/Article/1019954/ambassador-richard-b-norland/

[31] Հեղինակի հարցազրույցը Ռիչարդ Նորլանդի հետ, Վաշինգտոն, 2017թ.:

չգար վերահսկողությունից: Դրա միակ հնարավորությունը Ռուսաստանին և նորանկախ մյուս պետություններին՝ կայացման ճանապարհին անհրաժեշտ օժանդակության ցուցաբերումն էր: Միայն այդպես հնարավոր կլիներ խաղաղ ճանապարհով բաժանել ոչ միայն Խորհրդային Միության տարածքը, այլև Խորհրդային բանակը, դրա ռազմական զույքը՝ այդ թվում միջուկային զինանոցը, որը տասնամյակներ շարունակ տեղակայված էր Ղազախստանում, Բելառուսում, Ուկրաինայում և Ռուսաստանում: Բացի այդ, նորանկախ պետություններում հնարավորինս արագ անհրաժեշտ էր զարգացնել ժողովրդավարությունն ու ժողովրդավարական ինստիտուտները, քանի որ դրա հետաձգումը կարող էր այդ պետություններում՝ ոչ արդյունավետ կառավարման բացակայության և քաղաքական վակուումի պատճառով, ձևավորել այնպիսի իշխանություններ, որոնք առավել բնորոշ կլինեին ոչ թե եվրոպական, այլ ասիական, կամ արաբական պետություններին:

Խորհրդային պետություններին աջակցելու նպատակով 1992 թվականի հունվարի 22-ին Վաշինգտոնում տեղի ունեցավ «Միջազգային մարդասիրական աջակցություն նախկին Խորհրդային Միությանը» խորագրով կոնֆերանսը: Դրա նպատակն էր նորանկախ պետություններին աջակցել պարենով, սնունդով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության այլ պարագաներով: Կոնֆերանսին մասնակցում էին 47 պետությունների ներկայացուցիչներ: ԱՄՆ նախագահ Բուշը, բացման խոսքում մանրամասն ներկայացնելով նախկին ԽՍՀՄ-ում տիրող իրավիճակն, անդրադարձավ նաև Հայաստանին. «Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ով նախկինում բանտարկվել էր իր գաղափարների համար, մի մեծ համազգային շարժում է առաջնորդում, որպեսզի տրանսֆորմացիայի ենթարկի տնտեսական մոդելը և ազատագրի իր ժողովրդին քաղաքական հալածանքներից:»[32]

---

and video version from here; https://www.c-span.org/video/?23944-1/international-aid-former-soviet-union

Ընդհանուր առմամբ, Արևմուտքում ճիշտ էր ընկալվում այն իրողությունը, որ նախկին ԽՍՀՄ տարածքում տեղի ունեցող գործընթացները հնարավորինս արագ պետք է կարգավորվեն, քանի որ այդ մարտահրավերների հաղթահարման հետաձգումը կհանգեցնի առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի ավելի խորացմանը և ուշացած յուրաքանչյուր օր անդառնալի հետևանքներ կարող է ունենալ նախկին ԽՍՀՄ ժողովուրդների համար: Լրացուցիչ մարտահրավերներ էին նաև էթնոքաղաքական հակամարտությունների, այդ թվում և ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործման համար պայքարող ժողովուրդների խնդիրների լուծումները: Հնարավորինս արագ գործելու անհրաժեշտությամբ առաջնորդվելով, ԱՄՆ կառավարությունը օպերատիվ տեմպերով էր զարգացնում իր հարաբերությունները նախկին ԽՍՀՄ հանրապետությունների այդ թվում նորանկախ Հայաստանի հետ:

1992 թվականի փետրվարին 11-ին ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերը տարածաշրջանային այցով ժամանեց նախկին ԽՍՀՄ երկրներ, այդ թվում՝ Հայաստան: Սա երբևէ Հայաստան ժամանած ամերիկացի ամենաբարձրաստիճան պաշտոնատար անձի այցն էր և հաջորդ նման մակարդակով այց տեղի ունեցավ միայն 18 տարի անց, երբ 2010 թվականին Հայաստան այցելեց պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Երևանում, ինչպես «Նյու Յորք թայմսում» տպագրված հոդվածում[33] նշում էր Ջ. Բեյքերին ուղեկցած լրագրող Թոմաս Ֆրիդմանը, Ջեյմս Բեյքերը ընթրիք ունեցավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Ընթրիքի ընթացքում Տեր-Պետրոսյանը հայտարարել էր, որ ԱՄՆ-ն չպետք է շտապի ճանաչել Ադրբեջանի անկախությունը քանի, որ այդ պետությունը չի համապատասխանում ԱՄՆ-ի հետ դիվանա-

[32] Speech of the President available from here; http://www.presidency.ucsb.edu/ws/index.php?pid=20522&st=central+asia&st1= And video version from here; https://www.c-span.org/video/?23944-1/international-aid-former-soviet-union

[33] Baker opens tour of the Caucasus, http://www.nytimes.com/1992/02/12/world/baker-opens-tour-of-the-caucasus.html

գիտական հարաբերությունների հաստատելու չափանիշներին և անմարդկային վերաբերմունքի է արժանացնում Լեռնային Ղարաբաղի ժողովրդին: Թ. Ֆրիդմանի հոդվածից ամերիկյան ընթերցողը ոչ միայն տեղեկացավ այցի մանրամասներին, այլև կարողացավ որոշ չափով լրացնել այն քիչ տեղեկությունները, որոնք ուներ նորանկախ Հայաստանի մասին.

«Պետքարտուղարին Հայաստանում դիմավորողների մի խումբ կար օդակայանում: Սա ԱՄՆ որևէ պետքարտուղարի առաջին այցն էր աշխարհի այս անկյուն: Պետքարտուղարն իր հետ ամեն տեղ տանում էր արբանյակային հեռախոսը, որպեսզի հեռախոսակապ և ֆաքսի հնարավորություն ունենա արբանյակային կապի միջոցով: Պետքարտուղարին ուղեկցող լրագրողները տեղավորվել էին երեքը մեկ սենյակում սկզբունքով՝ քաղաքի միակ շենքում, որտեղ ջեռուցում կար: Վառելիքի ներմուծումը Հայաստան խաթարված էր Լեռնային Ղարաբաղի խնդրի պատճառով՝ Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման արդյունքում: Պետքարտուղարի ավտոշարասյունը անցնում էր Երևանի մութ փողոցներով, որի տներում միայն կերոսինի լապտեր էին վառվում:»[34]

Հայկական մամուլը, բնականաբար, նույնպես անդրադարձել է պատմական այդ այցին.

> «Փետրվարի 12-ին ժամը 18 անց 53 րոպեին Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք կատարեց «Բոինգ-707» ամերիկյան ինքնաթիռը, որով Մոլդովայից աշխատանքային այցով Հայաստան ժամանեց ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերը: Օդանավակայանում պետքարտուղարին դիմավորեցին Հայաստանում ԱՄՆ ժամանակավոր հավատարմատար Սթիվեն Մաննը, Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը և այլ անձինք: Հավաքված մոտ չորս տասնյակ լրագրողների ձեռքով ողջունելուց հետո, պրն Բեյքերը

[34] Նույն տեղում:

ուղևորվեց կառավարական հյուրատուն, որտեղ նրան ընդունեց հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Պետքարտուղարի պատվին տրվեց ընթրիք: Ընթրիքից հետո Տեր-Պետրոսյանը և Բեյքերը տեղացի և օտարերկրյա լրագրողների համար մամուլի ասուլիս տվեցին: Ջեյմս Բեյքերը հանդիպումը Լևոն Տեր-Պետրոսյանի հետ արդյունավետ գնահատեց: Նա ասաց, որ իրենք պաշտպանում են Ռուսաստանի և Ղազախստանի խաղաղ միջնորդության ջանքերը Ղարաբաղյան խնդրում: Բեյքերն ասաց, որ Բաքվում նույնպես քննարկելու է Ղարաբաղի հարցը: Հաջորդ առավոտյան պետքարտուղարը աշխատանքային այցով մեկնել էր Բաքու:»[35]

ԱՄՆ Պետդեպարտամենտի արխիվներում գաղտնազերծվել է աշխատանքային ընթրիքի սղագրության մի մասը:[36] Ըստ այդմ, հանդիպմանը մասնակցել են Նախագահ Տեր-Պետրոսյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Բաբկեն Արարքցյանը, Ժիրայր Լիպարիտյանը, Աշոտ Մանուչարյանը և Ռուբեն Շուգարյանը: Վերջինս նաև թարգմանում է հանդիպումը: Նախ, հանդիպմանը քննարկվում են Հայաստանում իրականացվող բարեփոխումները, այնուհետ Տեր-Պետրոսյանը նշում է, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի խնդիրը դիտարկում է, որպես Ադրբեջանի ներքին խնդիր և կստարի ցանկացած լուծում, որը կբավարարի Ղարաբաղի ժողովրդին: Նա նաև տեղեկացնում է, որ նախորդ օրը իրեն զանգահարել է Մութալիբովը: Տեր-Պետրոսյանը նրան առաջարկել է խոսել Ղարաբաղի ներկայացուցիչների հետ և Մութալիբովը համաձայնել է: Բեյքեր-Տեր-Պետրոսյան հանդիպման ընթացքում քննարկվել են տասնյակ այլ թեմաներ, սակայն դրանցից հիմնականը եղել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Երևան կատարած այցի ժամանակ պետքարտուղար Բեյքերն այցելել էր նաև Մաշտոցի պողոտայի Փակ շուկա: Ալեքսանդր Արզումանյանը

[35] «Ազգ» օրաթերթ, 12 փետրվարի, 1992թ., թիվ 10 (102)
[36] Department of State Case No. F-2unnaN-na:AlTh Date:07/22/2016 C17604519.pdf

հիշում է. «Այդ այցելությունը մի քանի ժամ տևեց: Բեյքերը գնացել էր Փակ շուկա, ասել էր՝ «Ի՞նչ լավ է: Ձեր սեփականաշնորհման արդյունքն է, որ հարուստ շուկա ունեք» և այլն: Ձևական բան էր: Ընդհանրապես ավելի շատ ռուսների ռեակցիան էր այդ ժամանակ ստուգվում: Ռուսներն էլ թուլացած վիճակում էին, բավականին շատ զիջումների էին գնում: Նրանք կարծում էին, որ կսկսեն Կովկասը կիսել միմյանց միջև:»[37]

Այդ ժամանակ ՀՀ արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն ամփոփում է այցը. «Պարզ է, որ ես փորձում էի իմ ներդրումն ունենալ՝ աճող հարաբերությունների շնորհիվ, որոնք ձևավորվել էին ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ: Այդ շրջանում պաշտոնական հանդիպումները նախագահ Տեր-Պետրոսյանի և առանձին ինձ հետ, նաև այցը Փակ շուկա և այլն, շատ շահեկան համարվեցին մեր պետության համար:»[38]

Քանի որ ԱՄՆ-ն Հայաստանում արդեն դեսպանություն ուներ, պայմանավորվածություն կար, որ Հայաստանը նույնպես պետք է իր առաջին դեսպանություններից մեկը բացի Վաշինգտոնում: Ֆինանսական միջոցների խիստ սղության պատճառով 1992 թվականի մարտին Վաշինգտոնում բացված Հայաստանի Հանրապետության դեսպանությունը ռեզիդենտ դեսպան չուներ: Հաշվի առնելով ֆինանսական բարդությունները Հայաստանի քաղաքական ղեկավարությունը որոշել էր, որ Վաշինգտոնում Հայաստանի դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվի ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Ալեքսանդր Արզումանյանը, ինչը դիվանագիտական պրակտիկայում ընդունված երևույթ չէ:

Ալեքսանդր Արզումանյանը հիշում է.

«Ծանր վիճակ էր: Նյու Յորքում էլ շենք չունեինք: 34-րդ փողոցում գտնվող մեր առաջնորդարանում էինք նստում:

---

[37] Հեղինակի հարցազրույցը ՀՀ ԱԳ նախկին նախարար Ա. Արզումանյանի հետ, Երևան, 2017թ.

[38] Հեղինակի հարցազրույցը ՀՀ ԱԳ նախկին նախարար Ռ. Հովհաննիսյանի հետ, Երևան 2017թ.

Այնտեղ շատ հարմար էր, ՄԱԿ-ի կենտրոնականին մոտ էր: Ի սկզբանե, ես գնացել էի որպես ՄԱԿ-ում դեսպան: Լևոն Տեր-Պետրոսյանն ասում էր՝ «հրամանագիրը տամ», ես չէի ցանկանում: Ինձ նույնիսկ Պետդեպից ասում էին՝ «Դու դեսպանի դիվանագիտական աստիճան ունես: Արի քեզ դեսպան գրենք, հավատարմագիր տուր, որովհետև գեղեցիկ չէ՝ քեզ «chargé»-ի քարտ տանք՝ մեջը գրված լինի «Ambassador»: Ասում էի՝ ոչ, ժամանակավոր բան է: Մարդ պետք է գա»: Ռուբեն Շուգարյանն էր հավանական թեկնածուն, մտածել էինք այդ մասին: Ի վերջո, ես պետք է որոշեի՝ երկուսից որն եմ ընտրելու: Բայց ինձ ՄԱԿ-ն ավելի հետաքրքիր էր, ՄԱԿ-ում շատ անելիք կար, որովհետև Ադրբեջանն արդեն ակտիվանում էր: Այդ ընթացքում առնվազն շաբաթը մեկ գնում էի Վաշինգտոն: Այնտեղ աշխատակից ունեի: Հետո արդեն հյուպատոսական ծառայությունների մասը կարգավորեցինք: Մենք հարկաբաժինը կիսում էինք Ամերիկայի Հայկական համագումարի հետ: Առանձին մուտք ունեինք, բայց Համագումարի ամբողջ աշխատակազմը սիրահոժար մեզ օգնում էր: Վաշինգտոնում ես եմ ընտրել մեր դեսպանության շենքը, բացմանն էլ ներկա եղել եմ: Երբ Նյու Յորքում ՄԱԿ-ում մեր մշտական ներկայացուցչության շենքը ընտրեցինք, այն մեզ համար ձեռք բերեց Գևորգը Հովնանյանը: Բացմանը ներկա էր նաև նրա եղբայր Հրայր Հովնանյանը, ով իրեն շատ վատ զգաց: Ասաց՝ «Այս ինչպե՞ս եղավ, որ ես չմասնակցեցի»: Ասացինք՝ «Դուք էլ օգնեք, որ Վաշինգտոնում ձեռք բերենք»: Ասաց՝ «Դե շենք գտեք, տեսնենք»:[39]

[39] Հեղինակի հարցազրույցը ՀՀ ԱԳ նախկին նախարար Ա. Արզումանյանի հետ, Երևան 2017թ.

907-րդ բանաձևը հայ-ամերիկյան հարաբերությունների և ԱՄՆ տարածաշրջանային շահերի համատեքստում

1992 թվականի օգոստոսին, ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց «Ազատության Աջակցության Ակտ» օրենքը (Freedom for Russia and Emerging Eurasian Democracies and Open Markets Support Act of 1992), որով նախատեսվում էր օժանդակել Ռուսաստանին և նորանկախ մյուս պետություններին՝ ձևավորելու ժողովրդավարական վարչակարգ և ազատական տնտեսություն: Ակտն իրենից ներկայացնում էր գործողությունների փաթեթ, որը պետք է ԱՄՆ իշխանություններն իրականացնեին՝ հաշվի առնելով Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված նոր քաղաքական իրողությունները: Դա բազմաբովանդակ և ընդգրկուն իրավական ակտ էր և բոլոր ուղղություններով հետևողական աշխատանք էր նախատեսում: Դրա ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև նրանով, որ նախորդ ֆինանսական տարում 1992 թվականի համար արտաքին ֆինանսական աջակցության հոդվածով նախատեսված չէր աջակցություն ԽՍՀՄ նորանկախ պետություններին, քանի որ այդ ժամանակ ԽՍՀՄ-ը դեռևս գոյություն ուներ և նման ֆինանսավորում նախատեսված լինել չէր կարող: Այդ տարիներին ԱՄՆ-ում հայկական լոբբիստական կազմակերպությունները բավական ակտիվ և ազդեցիկ էին: Հաշվի առնելով Արցախի դեմԱդրբեջանի ռազմական ագրեսիան, հայ համայնքի և լոբբիստների աշխատանքի շնորհիվ «Ազատության Աջակցության Ակտ»-ի տեքստում նախաձեռնվեց 907-րդ բանաձևը[40] (հոդվածը), որով արգելվեց ԱՄՆ կառավարությանը որևէ աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, քանի դեռ ԱՄՆ նախագահը չի համոզվել՝ հետևաբար զեկուցել Կոնգրեսին, որ պաշտոնական Բաքուն գործուն քայլեր է ձեռնարկում Հայաստանի ապաշրջափակման համար և ուժ չի կիրառում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ: 907-րդ բանաձևի նախաձեռնողը

[40] The full text is available from here; https://www.congress.gov/bill/102nd-congress/senate-bill/2532/text

Մասսաչուսետսից դեմոկրատ սենատոր Ջոն Քերրին էր:[41] Այն ընդունվեց 14/4 ձայների հարաբերակցությամբ: Նախագահ Բուշի կողմից օրենքի ստորագրման պահից այն ուժի մեջ մտավ և դարձավ Ադրբեջան-ԱՄՆ հարաբերությունների համար խոչընդոտ, ուժի մեջ մնալով շուրջ 10 տարի: Ստացվեց այնպես, որ այդ տարիների ընթացքում Ադրբեջանը ԱՊՀ միակ պետությունն էր, որը ԱՄՆ կառավարությունից ուղղակի օժանդակություն չէր կարողանում ստանալ: Բազմաթիվ փորձեր՝ դիվանագիտական խողովակներով, թե լոբբիստների կողմից, էին իրականացվում, սակայն հայ լոբբիստներին հաջողվում էր բանաձևը թողնել ուժի մեջ:

907-րդ բանաձևով ԱՄՆ Նախագահին որևէ իրավունք չէր վերապահվում շրջացնելու այդ դրույթը: Ավելի ուշ դեսպան Արմիտաջը հիշում էր, որ ադմինստրացիան դեմ էր այս բանաձևին և դրա պատճառով շատ թեժ քննարկումներ եղան՝ տեքստի ձևակերպումները մեղմելու ուղղությամբ: Այդուհանդերձ բանաձևն ընդունվեց:[42] Այդ տարիներին ԱՄՆ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ալեքսանդր Արզումանյանը հիշում է: «907-րդ բանաձևի ընդունման համար Ամերիկայի Հայկական համագումարն է աշխատանքի մեծ մասն արել: Մշտապես կապի մեջ ենք եղել: Չի եղել, որ ես որևէ պաշտոնական խոսակցության ժամանակ՝ Ներկայացուցիչների Պալատում, կամ Սենատում դա ասեմ, բայց ընդունելությունների ժամանակ օրինակ, ասել ենք, որ մենք գտնում ենք, որ դա կնպաստի իրավիճակի կայունացմանը, կսանձահարի

[41] The Co-sponsor information available from here; https://www.congress.gov/amendment/102nd-congress/senate-amendment/2686/text

[42] Congressional Research Service, The Library of Congress, May 20, 2004 International Relations Foreign Affairs, Defense and Trade Division the Former Soviet Union and U.S. Foreign Assistance in 1992: The Role of Congress https://www.everycrsreport.com/files/20040520_RL32410_23e493efaa2c03d6229406332f0480d5213f4c53.pdf

Ադրբեջանի ախորժակը և այլն: Այսինքն՝ ցույց ենք տվել, որ մեր պետությունը շահագրգռված է, որ բանաձևը ուժի մեջ մնա:»[43]

Չնայած այն հանգամանքին, որ Կոնգրեսն արդեն ընդունել էր օրենքը հենց այդ ձևակերպումներով, գործադիրում դրա վերաբերյալ այլ կարծիք կար:

Դեսպան Ռիչարդ Կաուզլարիչը հիշում է. «Պետդեպում ահավոր զայրացած էին: Միշտ բոլորը մեղադրում էին Քերրիին, սակայն Բայդենն էլ էր ներգրավված: Իհարկե հիմնականում դա Քերրին էր, սակայն մենք հասկանում էինք, որ դրա ետևում կանգնած է հայկական լոբբին, որը բավական արդյունավետ էր այդ ժամանակ աշխատում: Ես, իհարկե, չէի էլ կարող ենթադրել, որ մի օր նշանակվելու եմ դեսպան Ադրբեջանում, բայց մենք չափազանց անհանգստացած էինք, որ հետագայում բարդանալու է Էլչիբեյի և Ալիևի վրա մեր՝ ազդեցություն ունենալու հնարավորությունը, միաժամանակ հասկանում էին, որ դա անարդար է Ադրբեջանի ժողովրդի նկատմամբ և Պետդեպում շատերն էին հասկանում քաղաքական իրողությունները, բայց ոչինչ անել չէին կարող, քանի որ անհրաժեշտ էր, որպեսզի Ակտն արագ ընդունվի: Ակտի հիմնական թիրախն իհարկե Ռուսաստանն էր և Ուկրաինան և որպեսզի հնարավորինս արագ այնտեղ օգնություն հասցնենք, նաև պատճառներից մեկը Ռուսաստանի և Ուկրաինայի միջուկային զինանոցն էր, դրա համար էլ պետք էր արագ գործել: Ստացվեց այնպես, որ այդ ամենի դիմաց մեր վճարը դարձավ հենց 907-րդ բանաձևը:»[44]

907-րդ բանաձևն էապես խանգարում էր ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների բնականոն զարգացմանը՝ տնտեսական, քաղաքական և ռազմական ոլորտներում: Այն բացառիկ իրավական ակտ էր, որը քաղաքական օրակարգ էր թելադրում Ադրբեջանի հետ

---

[43] Հեղինակի հարցազրույցն այդ տարիներին ԱՄՆ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Արզումանյանի հետ, մարտի 7, 2016թ. Երևան:

[44] Հեղինակի հարցազրույցը դեսպան Կաուզլարիչի հետ, Վաշինգտոն, 2017թ.:

ԱՄՆ երկկողմ հարաբերություններում: 907-րդ բանաձևը շուրջ 10 տարի ուժի մեջ մնաց: Չնայած օրենքի արգելքին, այդուհանդերձ ամերիկյան կողմը որոշ մարդասիրական օգնություն կարողանում էր ուղարկել Ադրբեջանին: Մասնավորապես, Ադրբեջանին տրամադրվում էր օժանդակություն մարդասիրական հասարակական կազմակերպությունների միջոցով, հիմնականում Լեռնային-Ղարաբաղից փախստականներին օժանդակելու համար:[45] Այդուհանդերձ ԱՄՆ-ն չէր կարողանում ուղիղ ֆինանսական օգնություն կամ օժանդակություն տրամադրել Բաքվին, ինչի պատճառով էլ հնարավոր չէր լինում ազդեցության լուրջ լծակներ ունենալ այդ երկրում և Ադրբեջանի կախվածությունը ԱՄՆ-ից ավելի քիչ էր: 907-րդ բանաձևը 1992-2001թթ. ԱՄՆ-Ադրբեջան քաղաքական հարաբերությունների օրակարգի զարգացման խոչընդոտ էր դարձել:

Եզրակացություն

ԽՍՀՄ փլուզման հաջորդող տարիներին ԱՄՆ-ն հստակ հետաքրքրվածություն ուներ տարածաշրջանով: Դրա մասին են վկայում թե Բուշի վարչակազմի ակտիվությունը տարածաշրջանային գործընթացներում, և թե գաղտնազերծված ծառայողական փաստաթղթերի ուսումնասիրությունները: Հայաստանը հայտնվել էր ԱՄՆ քաղաքական վերնախավի ուշադրության կենտրոնում մի քանի պատճառով: Նախ անկախության համար պայքարը համարվում էր ազգային ազատագրական պայքար՝ ուղղված ԽՍՀՄ բռնապետական ռեժիմի դեմ. ԱՄՆ-ն ԽՍՀՄ փլուզումը դիտարկում էր, որպես նոր հնարավորություններ, սակայն միևնույն ժամանակ նաև մարտահրավերներ: Հարավային

[45] **Curt Tarnoff**, Specialist in Foreign Affairs, Foreign Affairs, Defense, and Trade Division U.S. Assistance to the former Soviet Union 1991-2001: A History of Administration and Congressional Action CRS Report for Congress, U.S. Assistance to the Former Soviet Union 1991-2001: A History of Administration and Congressional Action, January 15, 2002, Congressional Research Service the Library of Congress http://congressionalresearch.com/RL30148/document.php

Կովկասի երկրները դիտարկվում էին նաև, որպես Իրանի հարևաններ և այս առումով նունպես կարևոր էր երկկողմ հարաբերությունների խորացումը բոլոր ուղղություններով: Եվ վերջապես ԱՄՆ-ի համար սկզբունքային նշանակություն ուներ մի քանի «հաջողված պատմություն» (success story) ունենալու անհրաժեշտությունը, ինչը առավել լայն հնարավորություն կտար այլ ուղղություններով ազդեցության տարածման համար՝ կոնկրետ օրինակների առկայության պարագայում: Գաղտնազերծված փաստաթղթերի ուսումնասիրությունը բացահայտում է ամերիկյան առաջնահերթությունները Հայաստանի հետ հարաբերություն-ներում: ԱՄՆ կարևորում էր ինչպես Լեռնային Ղարաբաղի խնդրի արագ կարգավորումը, այնպես էլ հայ-թուրքական հարաբերու-թյունների հաստատումն ու սահմանների բացումը: ԱՄՆ-ն քաջալերում էր Հայաստանին՝ կիրառելու իր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ, ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով: Փաստաթղթերը նաև ապացուցում են, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար Վաշինգտոնը յուրահատուկ «գաղտնի» միջնորդի դեր էր ստանձնել՝ փորձելով կարգավորել Երևան-Անկարա հարաբերությունները: Գաղտնազերծված փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Վաշինգտոնը կարևորում էր ներգրավվածությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում՝ հատկապես այդ ժամանակահատվածում և նորանկախ պետություններին տրամադրվող զգալի ֆինանսական աջակցությունը պայմանավորված էր ինչպես մարդասիրական նպատակներով, այնպես էլ ազդեցության ձեռքբերման հեռանկարով: Տարածաշրջանում Միացյալ Նահանգների ակտիվության հիմնական նպատակն էր սեփական ազդեցության տարածումը հնարավորրինս կարճ ժամանակահատվածում, քանի դեռ Ռուսաստանը գտնվում էր ծանր տնտեսական վիճակում, առկա էին բազմաթիվ ներքաղաքական խնդիրներ և մեծ ակտիվություն չուներ արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում և նախկին ԽՍՀՄ տարածքում: Դա էր պատճառը, որ Հայաստանի

անկախության ճանաչումից օրեր անց հաստատվեցին դիվանագիտական հարաբերությունները և տեղի ունեցավ պետքարտուղար Բեյքերի տարածաշրջանային այցը Հարավային Կովկաս: ԱՄՆ-ն փորձում էր հնարավորինս ակտիվ դեր խաղալ նաև տարածաշրջանային հակամարտություններն ու խնդիրները կարգավորելու հարցում, հասկանալով, որ դրանց կարգավորված չլինելը լուրջ հնարավորություն է տարածաշրջանում ռուսական ազդեցության վերականգնման համար: Դրանով էր պայմանավորված նաև ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ ակտիվ ներգրավվածությունն ու աջակցությունը բանակցային գործընթացին: Հաջորդ կարևոր ուղղությունը ակտիվությունն էր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում: Այդ խնդրի կարգավորումը Բուշի, հետագայում նաև Քլինթոնի վարչակազմի կարևորագույն առաջնահերթություններից էր տարածաշարջանում և սա դիտարկվում էր, որպես Ռուսաստանի ազդեցության կրճատման ևս մեկ, լրացուցիչ հնարավորություն: Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի անդամ պետություն և ԱՄՆ ռազմավարական դաշնակից, կարող էր Վաշինգտոնին օգտակար լիներ այս հարցում: Հայ-թուրքական բաց սահմանը կարող էր թուլացնել Երևանի կախվածությունը: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը թուրքական կողմը ուղղակիորեն կապում էր Արցախյան խնդրի կարգավորման հետ, ինչն էլ ավելի էր սահմանափակում Վաշինգտոնի հնարավորությունները Հարավային Կովկասում ազդեցության տարածման համար: Վերջապես տարածաշրջանային խնդիրները կարգավորելով և ընդլայնելով ներկայությունը տարածաշրջանում, ԱՄՆ-ն կարող էր առավել արդյունավետ գործել՝ Իրանին միջազգային մեկուսացման գործում:

Երկկողմ հարաբերությունների համատեքստում կարևոր էր ԱՄՆ-ի տրամադրած աննախադեպ աջակցության ծավալը, որը տարեցտարի ավելանում էր: Իհարկե լուրջ ազդեցություն ունեին հայկական լոբբիստական կազմակերպությունները, սակայն պետք է հաշվի առնել, որ հայկական լոբբիստների և ԱՄՆ պետական

շահերն այս առումով համընկնում էին: 1994թ. դրությամբ Հայաստանը ԱՄՆ-ից ստացել էր շուրջ կես միլիարդ դոլարի աջակցություն:

The establishment of the US-Armenia relations and the US policy towards Armenia

SUREN SARGSYAN
Yerevan State University of Languages and Social Sciences

The purpose of this research is to examine the US foreign policy towards Armenia shortly after the collapse of the USSR. In that context the paper analyzes whether the US policy in the South Caucasus region had more concentration on bilateral or regional approach. The subject of a study is the period from the formal recognition of Armenia's independence by the United States Government, establishment of diplomatic relations, exchange of diplomatic notes and opening of embassies. For that purpose, the research has been conducted in the archives of the US Department of State, where recently declassified diplomatic cables were examined. This allowed to discover new facts and more detailed information regarding the priorities of the US foreign policy towards Armenia and the region at large during George Bush administration. Based on the fact that declassified documents shed a light on a number of important political processes of early 90’s, an attempt is made to take into consideration the newly emerging circumstances and combine those circumstances with the existing facts available from other sources. Another important component of the research are the interviews conducted by the author with key officials involved in foreign political processes of those times.